ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մոլդովայի Հանրապետություն (Քիշնև) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, Զբաղեցրած պաշտոնը**

   Տաթևիկ Ստեփանյան

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները**
   2026 թվականի մարտի 17-ից 19-ը, Մոլդովայի Հանրապետություն, Քիշնև

3. **Հրավիրող կողմը**
   Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար և Մոլդովայի Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարար:

4. **Գործուղման նպատակը**
   Մասնակցություն Եվրոպական սոցիալական խարտիային նվիրված բարձրաստիճան համաժողովին:

5. **Քննարկված թեմաները**
   Համաժողովի շրջանակում քննարկվել են Եվրոպական սոցիալական խարտիայով ամրագրված սոցիալական իրավունքների արդյունավետ իրականացման, սոցիալական արդարության և հավասարության ապահովման, ինչպես նաև սոցիալական պաշտպանության համակարգերի զարգացման և դիմակայունության բարձրացմանն առնչվող հարցեր: Անդրադարձ է արվել սոցիալական պաշտպանության համակարգերի թվայնացման հնարավորություններին և մարտահրավերներին, ներառականության ապահովմանը, խոցելի խմբերի պաշտպանությանն ու միջազգային համագործակցության խորացմանը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

   - Մարտի 18-ին տեղի ունեցած հարակից միջոցառման պանելային քննարկման ընթացքում («Սոցիալական պաշտպանության համակարգերի թվայնացումը Եվրոպայում. արդյունավետության խոստումը՝ ի հակադրություն

սոցիալական բացառման իրականության») քննարկվել են սոցիալական պաշտպանության համակարգերի թվայնացման հնարավորություններն ու ռիսկերը, մասնավորապես՝ ծառայությունների հասանելիության բարձրացումը, վարչարարության արդյունավետության ապահովումը, տվյալների վրա հիմնված քաղաքականությունների մշակումը, ինչպես անհավասարության, տվյալների պաշտպանության և ալգորիթմական որոշումների թափանցիկության հետ կապված խնդիրները:

- Հիմնական նիստերի ընթացքում քննարկվել են Եվրոպական սոցիալական խարտիայով ամրագրված սոցիալական իրավունքների արդյունավետ իրականացման, սոցիալական արդարության և հավասարության ապահովման, ինչպես նաև սոցիալական պաշտպանության համակարգերի կայունության և դիմակայունության բարձրացման հարցերը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել սոցիալ-տնտեսական մարտահրավերներին արձագանքելու, խոցելի խմբերի պաշտպանության և ներառական քաղաքականությունների իրականացման անհրաժեշտությանը:
- Մարտի 19-ի բարձր մակարդակի նիստի շրջանակում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող բարեփոխումները սոցիալական պաշտպանության ոլորտում, մասնավորապես՝ սոցիալական աջակցության նոր համակարգի ներդրումը, թվայնացման գործընթացները, հաշմանդամություն ունեցող անձանց աջակցման քաղաքականությունները, ինչպես նաև զբաղվածության և ժողովրդագրական ռազմավարությունները և ճգնաժամային իրավիճակներում սոցիալական պաշտպանության համակարգերի արդյունավետ արձագանքման փորձը:
- Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի նախագահ Մարկ Կուլսի հետ երկկողմ հանդիպման ընթացքում քննարկվել են սոցիալական աշխատանքի զարգացման հիմնական ուղղությունները՝ մասնագիտացում, մասնագիտական չափանիշներ և համայնքային սոցիալական ծառայություններ
- Թվով երրորդ նախարարական համաժողովը տեղի կունենա 2029 թվականին Պորտուգալիայում՝ ԵՄ նախարարների կոմիտեում Պորտուգալիայի նախագահության ներքո:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի ընթացքում ընդունվել է Քիշնևի հռչակագիրը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկություններ չկան:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

3/24/2026

X

ՏԱԹԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Signed by: STEPANYAN TATEVIK 6205820293